

Հավելված  
Հաստատված է  
Հայաստանի Հանրապետության  
հանրային ծառայությունները  
կարգավորող հանձնաժողովի  
2018 թվականի ապրիլի 17-ի  
№120L որոշմամբ

## **ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

**Երեւան 2018**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԱԽԱԲԱՆ .....</b>	<b>3</b>
1. Իրավական ոլորտի բարեփոխումներ եւ իրավական գործառույթներ.....	5
2. Սակագնային քաղաքականություն.....	10
3. Լիցենզավորում .....	14
4. Սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված աշխատանքներ.....	15
<i>4.1. Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգ.....</i>	<i>15</i>
<i>4.1.1. Էներգետիկայի բնագավառ.....</i>	<i>17</i>
<i>4.1.2. Ջրային ոլորտ.....</i>	<i>19</i>
<i>4.2. Սպառողների դիմումների քննարկում.....</i>	<i>21</i>
5. Կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի համաձայնեցում եւ գնումների մոնիթորինգ.....	23
6. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն.....	25
7. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ.....	27
8. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության, թափանցիկության ապահովումը եւ համագործակցությունը զանգվածային լրատվության միջոցների ու հասարակական կազմակերպությունների հետ.....	37
9. Համագործակցությունը Եվրասիական տնտեսական միության, Եվրոպական միության, օտարերկրյա պետությունների եւ միջազգային կազմակերպությունների հետ.....	39
10. Հանձնաժողովի կողմից բյուջետային մուտքերի ապահովումը .....	42

## Նախաբան

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), փոստային կապի (ուճիվերսալ ծառայությունների մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում եւ ջրային ոլորտում (ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների դեպքում՝ միայն սակագների մասով) կարգավորող մարմին է, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «էներգետիկայի մասին», «էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման եւ վերանայման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետեւ՝ հանձնաժողով) 2017 թվականին գործել է հետեւյալ կազմով.

Ռոբերտ Նազարյան՝ հանձնաժողովի նախագահ,

Շիրազ Կիրակոսյան՝ հանձնաժողովի նախագահի տեղակալ (մինչև 2017 թվականի մայիսի 29-ը),

Միքայել Սողոմոնյան՝ հանձնաժողովի նախագահի տեղակալ (2017 թվականի մայիսի 29-ից),

Մուշեղ Կոչեցյան՝ հանձնաժողովի անդամ,

Արթուր Վարդանյան՝ հանձնաժողովի անդամ,

Արմեն Բաղդասարյան՝ հանձնաժողովի անդամ:

Հանձնաժողովն իր աշխատանքը կազմակերպել է աշխատակազմի միջոցով, որն ունի հետեւյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

- սակագնային քաղաքականության վարչություն,
- ֆինանսական վերլուծության վարչություն,
- իրավաբանական եւ լիցենզավորման վարչություն՝
- իրավաբանական եւ դատական սպասարկման բաժին,
- լիցենզավորման բաժին,
- զարգացման եւ մոնիթորինգի վարչություն՝

- տեխնիկական բաժին,
- տնտեսագիտական բաժին,
- հեռահաղորդակցության վարչություն`
- կարգավորման քաղաքականության բաժին,
- ռեսուրսների կառավարման եւ տեխնոլոգիական զարգացման բաժին,
- դիմում-բողոքների քննարկման եւ նիստերի նախապատրաստման բաժին,
- ներքին աուդիտի բաժին,
- միջազգային համագործակցության բաժին,
- տնտեսական բաժին,
- անձնակազմի կառավարման բաժին,
- հաշվապահական հաշվառման եւ սոցիալական ծրագրերի իրականացման բաժին,
- գնումների բաժին,
- ընդհանուր բաժին:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

## 1. Իրավական ոլորտի բարեփոխումներ եւ իրավական գործառույթներ

Հանձնաժողովի առաջնահերթ գործառույթներից մեկը կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումն է եւ միջազգային առաջավոր փորձի վրա հիմնված բազմակողմանի եւ առավել ճկուն իրավական կարգավորումը՝ ելնելով սպառողների եւ կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման ու կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից եւ հանրային ծառայությունների ոլորտում միջազգային համագործակցության անհրաժեշտությունից:

Ելնելով ՀՀ նոր Սահմանադրության պահանջների համապատասխանեցման, Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) կողմից մշակված «Կարգավորման անկախության բարձրացում» հաշվետվության, ՀՀ կառավարության հաստատած համանուն իրավական գործողությունների ծրագրի կատարման ապահովման, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով սահմանված՝ բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման ընդհանուր սկզբունքների համապատասխանեցման անհրաժեշտությունից՝ ՀՀ Ազգային ժողովը 2017 թվականի հունիսի 9-ին ընդունել է հանձնաժողովի մշակած «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) կատարված փոփոխությունները միտված են հանձնաժողովի, որպես ինքնավար մարմնի, սահմանադրաիրավական կարգավիճակի ամրագրմանը, հանձնաժողովի անդամների ընտրությանը ներկայացվող առավել մասնագիտացված պահանջների սահմանմանը, հանձնաժողովի անկախության բարձրացմանն ուղղված վերջինիս հաշվետվողականության, ֆինանսավորման, կառուցվածքային բարեփոխումների վերաբերյալ կարգավորումների լրամշակմանը, ինչպես նաեւ հանրային ծառայությունների կարգավորման գործընթացին սպառողների առավել ակտիվ մասնակցության ապահովման իրավադրույթների սահմանմանը:

Հաշվի առնելով Օրենքում կատարված փոփոխությունները՝ լրամշակվել է 2017

թվականի նոյեմբերի 1-ի N462Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նիստեր հրավիրելու եւ անցկացնելու կարգը:

Ի կատարումն Օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ արդարադատության նախարարությունը եւ հանձնաժողովը համատեղ մշակել են հանրային ծառայությունները կարգավորող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գրանցված հասարակական կազմակերպությունների ընտրության, գումարի տրամադրման կարգն ու պայմանները սահմանելու մասին որոշման նախագիծը, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N1721Ն որոշմամբ:

Կարելիորելով էլեկտրաէներգետիկական համակարգի շուկայի աստիճանական ազատականացման, միջպետական առևտրի խթանման անհրաժեշտությունը եւ հաշվի առնելով միջազգային կառույցների առաջարկությունները, 2017 թվականի ընթացքում ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության հետ համատեղ լրամշակվել է «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը, որի հիմնական նպատակը միջազգային առաջավոր փորձին համապատասխան էլեկտրաէներգետիկական շուկայի առավել արդյունավետ աշխատանքին ուղղված կարգավորման նոր գործիքների ներդրումն է: Մասնավորապես, օրինագծով նախատեսվող փոփոխություններն ուղղված են ներքին շուկայի սպառողների եւ կարգավորվող անձանց շահերի հավասարակշռմանը, սակագների կառուցվածքի բարելավմանը, արտադրության, սպառման շուկաներում պատասխանատվության միջոցների ներդրմանն ու համակարգում առկա այլ խնդիրների առաջադեմ եւ արդյունավետ լուծման ապահովմանը:

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսական աջակցությամբ, 2016 թվականի հունիսի 12-ին ԱՄՆ էներգետիկ ասոցիացիայի թիմի, Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարության եւ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի միջեւ կնքված փոխըմբռնման հուշագրին համապատասխան՝ մշակվել եւ հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 17-ի N161Ն որոշմամբ ընդունվել են Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոնները, որի նպատակն է կանոնակարգել էլեկտրաէներգետիկական համակարգի աշխատանքը, կարգավորել համակարգի օպերատորի, արտադրողների, հաղորդողի, բաշխողի, շուկայի օպերատորի, որակավորված սպառողների եւ հայտատուի գործունեությունը,

սահմանել վերջիններիս իրավունքներն ու պարտականությունները, ինչը համակարգի օպերատորին հնարավորություն կընձեռի ապահովել էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալի, անվտանգ, արդյունավետ ու թափանցիկ աշխատանքը եւ նվազեցնել համակարգի անվտանգության սպառնալիքները:

Միաժամանակ, էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոնները կապահովեն հաղորդման համակարգի բաց, թափանցիկ եւ ոչ խտրական հասանելիությունն ու օգտագործումը, շուկայի մասնակիցների, ինչպես նաեւ հայտատուների միջեւ ծագած վեճերի կարգավորման արդյունավետ համակարգի ստեղծումը եւ կարգավորեն էլեկտրաէներգետիկական համակարգի զարգացման երկարաժամկետ պլանավորումը, աշխատանքի կառավարումը, կարճաժամկետ պլանավորումը եւ կարգավարումը, նոր կամ վերակառուցվող հզորությունների միացումը հաղորդման ցանցին, ինչպես նաեւ էլեկտրաէներգիայի հաշվառմանը ներկայացվող պահանջները:

Մեկ փաստաթղթում ամփոփելով իրենց բնույթով շուկայի կանոն հանդիսացող կարգերն ու կանոնները՝ մշակվել եւ հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 9-ի N344Ն որոշմամբ հաստատվել են Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ժամանակավոր առելտրային կանոնները, որոնցով սահմանվել են էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցները եւ կառուցվածքը, կանոնակարգվել են էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների առելտրային փոխհարաբերությունները:

Հանձնաժողովը գործուն մասնակցություն է ունեցել նաեւ վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողներին վերաբերող իրավակարգավորումների վերանայման գործընթացում, համաձայն որի, ֆիզիկական եւ իրավաբանական անձինք սեփական կարիքները բավարարելու համար կարող են տեղադրել արեւային էներգիայի կիրառմամբ մինչեւ 500 կՎտ հզորությամբ ինքնավար կայաններ, արտադրել էլեկտրաէներգիա, իսկ ավելցուկը վաճառել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ հանձնաժողովի կողմից սահմանված հատուցման մեխանիզմներին համապատասխան:

Էլեկտրական էներգիայի վաճառքի եւ բաշխման ծառայության մատուցման սակագների հաշվարկման մեխանիզմը բարելավելու նպատակով մշակվել եւ հաստատվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի եւ բաշխման ծառայության մատուցման

սակագների հաշվարկման մեթոդիկան:

Սակագների սահմանման ու վերանայման գործընթացն առավել թափանցիկ եւ իրականացվող սակագնային քաղաքականությունն արդի խնդիրներին համահունչ դարձնելու նպատակով փոփոխություններ են կատարվել էներգետիկայի բնագավառի եւ ջրային ոլորտի սակագների սահմանման ու վերանայման կարգերում, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի սակագնային մարժայի հաշվարկման, Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկաներում եւ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիայի պայմանների մաս կազմող «Սակագներ եւ սակագների ճշգրտումներ» հավելվածում:

Նպատակ ունենալով բարձրացնել լիցենզավորված անձանց գործունեության, հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների եւ տեղեկատվության հավաստիության եւ սակագների վրա գործոնների ազդեցության գնահատման վերահսկողության արդյունավետությունը, ինչպես նաեւ ապահովել հանձնաժողովի աշխատանքային գործունեության թափանցիկությունը, ԱՄՆ կարգավորող հանձնաժողովների ասոցիացիայի (NARUC) հետ համագործակցության արդյունքում, հանձնաժողովի կողմից 2017 թվականին հաստատվել է էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց գործունեության մոնիթորինգի իրականացման կարգը: Նշված կարգով կանոնակարգվել են էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց գործունեության մոնիթորինգի տեսակները, իրականացման կարգը եւ ժամկետները, ինչպես նաեւ հստակեցվել են մոնիթորինգ իրականացնելու ժամանակահատվածում մոնիթորինգն իրականացնող անձի եւ լիցենզավորված անձի փոխհարաբերությունները, նրանցից յուրաքանչյուրի իրավունքներն ու պարտականությունները:

Համագործակցելով ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարության ու «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ, 2011 թվականից սկսած հանձնաժողովը պարբերաբար կատարելագործել է էլեկտրական ցանցին սպառողների միացման վերաբերյալ իրավակարգավորումները: Նշված փոփոխություններն ուղղված են եղել էլեկտրական ցանցին միացման եւ մատակարարման պայմանագրերի կնքման ժամկետների եւ գործընթացների կրճատմանը, դիմումների ներկայացման եւ պայմանագրերի կնքման էլեկտրոնային համակարգի ներդրմանը: Իրականացված բարեփոխումներն ամփոփվել են



հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 31-ի N218Ն որոշմամբ հաստատված պայմանագրի նոր օրինակելի ձեւում, որով մեկ միասնական փաստաթղթում են ներառվել սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման եւ էլեկտրական էներգիայի մատակարարման գործընթացները:

Նշված գործընթացի մշտապես բարեփոխման անհրաժեշտությունը կարելուովում է նաեւ այն հանգամանքով, որ այն Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի «էլեկտրական ցանցերին միացում» ցուցիչի մասով Հայաստանի Հանրապետության դիրքի բարելավման հիմքերից մեկն է: Հարկ է նշել, որ իրականացված բարեփոխումների արդյունքում, «Գործարարությամբ զբաղվելը-2018» զեկույցի համաձայն «էլեկտրական ցանցերին միացում» ցուցիչի մասով Հայաստանի Հանրապետության դիրքը բարելավվել է 10 կետով՝ 76-ից բարձրանալով 66-րդ հորիզոնական: 2017 թվականի ավարտին հանձնաժողովի համապատասխան որոշմամբ կրկին կրճատվել են էլեկտրական ցանցին միացման ժամկետները՝ փոքր եւ միջին ձեռնարկատերերի համար 120 օրից դառնալով 70 օր: Նշված բարեփոխումները իրենց արտացոլումը կգտնեն «Գործարարությամբ զբաղվելը-2019» զեկույցում եւ մեր կանխատեսումներով, Հայաստանի Հանրապետության դիրքը կբարելավվի եւս 36 կետով՝ բարձրանալով 30-րդ հորիզոնականը:

ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել Հայաստանում արդյունաբերական մասշտաբի «Մասրիկ-1» արելային ֆոտովոլտային ծրագրի իրագործմանն ուղղված միջազգային մրցույթի անցկացման փաթեթը: Մրցութային փաթեթի ձեւավորման շրջանակում միջազգային խորհրդատուի եւ հանձնաժողովի աջակցությամբ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամի կողմից մշակվել եւ հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի N543Ն որոշմամբ սահմանվել է բաշխման ցանցին կառուցվող (վերակառուցվող) կայանի միացման, կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում էլեկտրական էներգիայի առաքման եւ էլեկտրական էներգիայի առուվաճառքի (օրենքով գնման երաշխիք ունեցող ՅՕՄՎտ եւ ավելի տեղակայված հզորությամբ կայանում էլեկտրական էներգիա արտադրող-բաշխող) պայմանագրի օրինակելի ձեւը: Պայմանագիրը արդյունավետ լուծումներ է նախատեսում պայմանագրային կողմերի ռիսկերի հավասարաչափ բաշխման ու փոխադարձ պատասխանատվության հստակ մեխանիզմների ապահովման առումով: Միաժամանակ, հաստատվել են նաեւ «Մասրիկ-1» արելային ֆոտովոլտային ծրագրի շրջանակում ապագա կառուցապատող (ներդրող) ընկերության լիցենզիայի

պայմանները:

Հանձնաժողովը շարունակել է նաև էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի լրամշակման գործընթացը: Մասնավորապես, կարգը համապատասխանեցվել է «էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխություններին՝ ինքնավար արտադրողների մասով, հստակեցվել են հանձնաժողովի աշխատակազմի գործողությունները լիցենզիայի տրամադրման, երկարաձգման, լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու հայտերի ուսումնասիրության դեպքերում:

Հստակեցվել է կառուցման ավարտից հետո արտադրության ժամանակահատվածի անցնելու դեպքում հանձնաժողով ներկայացվող փաստաթղթերի ցանկը՝ համապատասխանեցնելով Հայաստանի Հանրապետությունում գործող իրավակարգավորումներին:

Կարգավորումներ են նախատեսվել արտադրության լիցենզաներով ամրագրված ժամկետներում կայանի փորձաքննություն անցած կառուցման նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, հանձնաժողով չներկայացնելու դեպքերի համար:

Վերանայվել են արտադրող կայանների վերակառուցման դեպքերը՝ դրանք կապելով շինարարության թույլտվություն պահանջող աշխատանքների հետ: Հստակեցվել են լիցենզիաների գործողությունների կասեցման եւ դադարեցման դեպքերը:

## **2. Սակագնային քաղաքականություն**

Հանձնաժողովի կողմից իրականացվող սակագնային քաղաքականությունը նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների եւ կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնելու արդիականացման եւ հեռանկարային զարգացման ծրագրեր:

Հաշվի առնելով էլեկտրաէներգետիկական համակարգում գործող ընկերությունների սակագների հաշվարկման մեթոդիկաները, 2018 թվականի փետրվարի 1-ից մինչև 2019 թվականի փետրվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար կանխատեսվող էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության, ներկրման

Եւ արտահանման հաշվեկշիռը, 2017 թվականին իրականացված կապիտալ ներդրումների փոխհատուցման անհրաժեշտությունը եւ ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վրա ազդող մի շարք այլ գործոնների փոփոխությունները, հանձնաժողովը վերահաշվարկել է արտադրող խոշոր կայանների կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) սակագները, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման եւ վթարային կամ անհաղթահարելի ուժի հետեւանքով առաջացած իրավիճակներում էլեկտրական էներգիայի ներկրման սակագները, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի եւ «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից շուկայի օպերատորի ծառայությունների մատուցման վճարները (սակագները), որոնք ուժի մեջ են մտել 2018 թվականի փետրվարի 1-ից:

Միեւնույն ժամանակ, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի եւ բաշխման ծառայության մատուցման սակագների հաշվարկման մեթոդիկայում ամրագրված սակագների հաշվարկման նոր եւ բարելավված մեխանիզմի՝ բաշխման ծառայությանը վերաբերող ծախսերի հստակեցման, դասակարգման (տարանջատում ըստ էլեկտրական էներգիայի գնման, բաշխման եւ սպառողների սպասարկման ծախսերի) եւ սպառողական խմբերի միջեւ բաշխման սկզբունքների կիրառման արդյունքում վերանայվել եւ զգալիորեն նվազեցվել են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման սակագները, որոնք ուժի մեջ են մտել 2018 թվականի փետրվարի 11-ից: Սակագների նշված վերանայման գործընթացի շրջանակում վերջնական սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագների վերանայման անհրաժեշտություն չի առաջացել:

Միեւնույն ժամանակ, ելնելով գործող իրավակարգավորումներից, հաշվետու տարվա ընթացքում վերանայվել են նաեւ «Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի եւ «Հայրուսկոգեմարացիա» ՓԲԸ-ի «Ինքնավար ջերմային էլեկտրակայան-1 (ԻՋԷԿ-1)» կոգեներացիոն կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Նախընթաց տարում ներկայացված հայտերի հիման վրա, ըստ գործող կարգի, սահմանվել (վերանայվել) են վերականգնվող աղբյուրների կիրառմամբ գործող թվով 11 փոքր կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Ելնելով սղաճի եւ արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից, յուրաքանչյուր տարի, համաձայն ընդունված մեթոդիկայի, վերանայվում են վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա

արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները: Միեւնույն ժամանակ վերահաշվարկվել եւ 2017 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ են մտել 3 հողմային էլեկտրակայաններից, «Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ-ի կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանից եւ 166 փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի նոր սակագները:

Հաշվետու տարվա ընթացքում, «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի համար նախատեսված պլանային նորոգումների ժամկետների փոփոխման հետ կապված, ճշգրտվել են ընկերության կայանի 2017 թվականի պայմանագրային եւ տնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները: Տարվա վերջին ուսումնասիրվել եւ հաստատվել են նաեւ էլեկտրական էներգիա արտադրող խոշոր կայանների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացվող 2018 թվականի պայմանագրային եւ տնօրինելի հզորությունների չափաքանակները:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն, համաձայն իրեն տրամադրված լիցենզիայի պայմանների «Սակագներ եւ սակագնային ճշգրտումներ» հավելվածի, 2017 թվականի օգոստոսին հայտ էր ներկայացրել հանձնաժողով՝ ճշգրտելու խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագները՝ մանրածախ ջրամատակարարման ծավալների փոփոխությունը, սղաճը եւ ընկերությանը մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխությունը բազիսային սակագներում հաշվի առնելու համար: Նշված հայտի ուսումնասիրության շրջանակում ընկերության կողմից գրանցված մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների հավաստիության ստուգման նպատակով հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի եւ սպառողների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպությունների կողմից համատեղ իրականացված մոնիթորինգի եւ այլ վերլուծությունների արդյունքում մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալը սակագների հաշվարկներում ավելացվել է շուրջ 3 միլիոն խորանարդ մետրով: Բացի այդ, համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի լիցենզիայի պայմաններում կատարված փոփոխության՝ բազիսային սակագների ճշգրտման ժամանակ հաշվի է առնվել նաեւ ջրային համակարգն այլ նպատակներով օգտագործելուց եւ խմելու ջուրը ոռոգման նպատակով մատակարարելուց ստացված լրացուցիչ հասույթը: Ելնելով սակագնի ճշգրտման մեթոդաբանությամբ ամրագրված բոլոր գործոնների ազդեցության հանրագումարից՝ վարձակալության 2-րդ պայմանագրային տարվա (2018 թվական) համար «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից բաժանորդներին խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի

մաքրման) ծառայությունների մատուցման սակագների գումարային մեծությունը սահմանվել է 191.414 դրամ/խմ (ներառյալ ավելացված արժեքի հարկը), որը գործող գումարային սակագնից ավել է 11.414 դրամ/խմ-ով: Սակայն, բաժանորդների համար սակագները մեղմելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ընկերությանը տրամադրում է նույն չափով սուբսիդիա եւ բաժանորդները խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների համար շարունակելու են վճարել մինչեւ այդ գործող սակագներով (գումարային 180 դրամ/խմ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը): Միաժամանակ, սահմանվել են ջրամատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող այլ անձանց, ջրամատակարարման եւ ջրահեռացման ծառայություններ մատուցող համայնքներին, համայնքային բյուջետային հիմնարկներին եւ ոչ առեւտրային կազմակերպություններին մեծածախ ծառայությունների, ինչպես նաեւ «Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ին ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման նոր սակագները:

«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից հանրային էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում մատուցվող սակագնային փաթեթների տեսականին ընդլայնելու եւ բնակիչ բաժանորդներին ընտրության ավելի մեծ հնարավորություն ընձեռելու, ինչպես նաեւ այդ ծառայությունների շուկայում մրցակցության զարգացումը խթանելու նպատակով հաշվետու տարում սահմանվել են «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից հանրային էլեկտրոնային հաղորդակցության երկու եւ ավելի ծառայություններից կազմված փաթեթներում ներառելու համար կարգավորվող ծառայության այլընտրանքային սակագները:

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից ելնելով՝ ճշգրտվել եւ հաստատվել են հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2018 թվականի անվանական կազմը եւ, հաշվի առնելով յուրաքանչյուր կարգավորման պարտադիր վճար վճարողի իրացման շրջանառությունը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը:

### 3. Լիցենզավորում

Հանձնաժողովը 2017 թվականի ընթացքում էներգետիկայի բնագավառում տրամադրել է էլեկտրական էներգիայի արտադրության 18 լիցենզիա, քննարկել լիցենզիայի վերածեւակերպման՝ 8, լիցենզիաների գործողության ժամկետների երկարաձգման՝ 9, արտադրության լիցենզիաներով անրագրված կառուցման ժամանակահատվածների երկարաձգման՝ 27 եւ էլեկտրական էներգիայի արտադրության ժամանակահատվածի անցնելու 6 հայտեր:

2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանրապետությունում գործել են 184 փոքր հիդրոէլեկտրակայաններ, եւս 31-ը գտնվում են կառուցման փուլում: Գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 353 ՄՎտ, որոնք միջին տարեկան հաշվով կարող են արտադրել շուրջ 929 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 70 ՄՎտ, եւ ակնկալվում է, որ գործարկումից հետո դրանք միջին տարեկան հաշվով կարտադրեն շուրջ 251 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Այսպիսով, կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գործարկումից հետո հանրապետությունում կգործեն 215 փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք կունենան գումարային 423 ՄՎտ հզորություն եւ միջին տարեկան հաշվով կարտադրեն շուրջ 1,18 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիա:

2017 թվականի ընթացքում լիցենզիայի պայմանները ոչ պատշաճ կատարելու եւ լիցենզիայի պայմաններով սահմանված ժամկետներում փոքր հիդրոէլեկտրակայանները չգործարկելու համար հանձնաժողովը կայացրել է ընկերություններին ֆինանսական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 39 որոշում:

Վերականգնվող էներգետիկայի բնագավառի զարգացման եւ հանրապետությունում վերականգնվող էներգառեսուրսների արդյունավետ օգտագործման կարելուագույն ուղղություններից է հանդիսանում նաեւ ինքնավար էներգաարտադրողների եւ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի միջեւ իրականացվող էլեկտրական էներգիայի փոխհոսքերի գործընթացը, որն առավելապես միտված է էլեկտրական էներգիա սպառողների սպառման ռեժիմների բարելավմանը: Մասնավորապես, «էներգետիկայի մասին», «էներգախնայողության եւ վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքներով սահմանված իրավակարգավորումներին համապատասխան, 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ էլեկտրական էներգիայի արտադրություն եւ «Հայաստանի էլեկտրական

ցանցեր» ՓԲԸ-ի հետ փոխհոսքեր են իրականացրել 200-ից ավելի ինքնավար էներգաարտադրողներ, եւ հաշվարկային տարվա արդյունքներով հավասար փոխհոսքերից ավելի էլեկտրական էներգիայի առաքման դեպքում վերջիններս հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 9-ի N344Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ժամանակավոր առելտրային կանոններով սահմանված կարգով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից ստացել են դրամական հատուցում:

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տրամադրվել են հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի 29 լիցենզիա, ռադիոհաճախականությունների օգտագործման՝ 10, սիրողական ռադիոյի՝ 15 եւ համարների զբաղեցման 3 թույլտվություն:

Հանձնաժողովի կողմից իրավական փորձաքննություն են անցել եւ գրանցվել էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջեւ կնքված 265 պայմանագրեր:

#### **4. Սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված աշխատանքներ**

##### *4.1 Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգ*

Կարգավորվող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի սահմանված ցուցանիշների ապահովման գործընթացը մշտապես գտնվում է հանձնաժողովի ուշադրության կենտրոնում՝ ինչպես կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տեղեկատվությունների վերլուծության, այնպես եւ տեղում իրականացվող ուսումնասիրությունների միջոցով: Այս գործիքակազմի կիրառմամբ մշտապես բարձրացվում է իրականացվող մոնիթորինգի արդյունավետությունը: Հանձնաժողովն էլեկտրական էներգիա, բնական գազ եւ խմելու ջուր մատակարարող ընկերություններից սպառողների սպասարկման որակի փաստացի ցուցանիշների վերաբերյալ եռամսյակային պարբերականությամբ ստացված տեղեկատվության, ինչպես նաեւ սպառողների կողմից հանձնաժողով ուղղված դիմում-բողոքների բնույթի եւ բովանդակության ուսումնասիրության հիման վրա մշտական մոնիթորինգի է ենթարկում՝

- էլեկտրական էներգիա, բնական գազ եւ խմելու ջուր մատակարարող ընկերությունների՝ սպառողների մատակարարման ընդհատումների քանակի եւ տեւողության ցուցանիշները,

- էլեկտրական էներգիա, բնական գազ եւ խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողների դիմումներին, բողոքներին եւ հարցադրումներին պատասխանելու ժամկետները,

- սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի եւ տեւողության հաշվարկային ցուցանիշները,

- առեւտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում էլեկտրական էներգիա եւ բնական գազ մատակարարող ընկերությունների կողմից կատարված վերահաշվարկները եւ հաշվարկված տույժերը,

- նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական, գազամատակարարման, ջրամատակարարման ցանցերին միացման գործընթացում սահմանված ժամկետների խախտումները եւ դրանց պատճառները:

Սպառողների սպասարկման որակի սահմանված ցուցանիշներից շեղումների դեպքում մատակարար ընկերությունների հետ պարբերաբար իրականացվել եւ իրականացվում են առկա խնդիրների կարգավորմանն ուղղված քննարկումներ, մշակվում են միջոցառումներ՝ նման խախտումները հետագայում բացառելու նպատակով: Հարկ է նշել, որ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը եռամսյակային կտրվածքով հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում ([www.psrc.am](http://www.psrc.am)):

2017 թվականին հանձնաժողովի աշխատակազմը իրականացրել է էլեկտրական էներգիա եւ բնական գազ մատակարարող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաստիության մոնիթորինգ, որի ընթացքում դիտարկվել են ընկերությունների կողմից տեղեկատվության հավաքագրման եւ ներկայացման ընթացակարգի առկայությունը, տեղեկատվության հավաքագրման գործընթացի իրականացման համապատասխանությունը սահմանված ընթացակարգին, ինչպես նաեւ հավաքագրված եւ ամփոփված տեղեկատվության համապատասխանությունը հանձնաժողով ներկայացված տեղեկատվությանը:

Արդյունքում՝ համապատասխան հանձնարարականներ են տրվել գործընթացի բարելավմանն ուղղությամբ, եւ արդյունքները հրապարակվել են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:



#### 4.1.1 Էներգետիկայի բնագավառ

2017 թվականին լրանշակվել են էլեկտրական էներգիայի մատակարարման եւ օգտագործման կանոնները, ըստ որի՝

- մատակարարը պարտավոր է 3 աշխատանքային օրվա ընթացքում դիմող անձին գրավոր տեղեկացնել էլեկտրական ցանցին միացման ժամկետների խախտման պատճառների եւ էլեկտրամատակարարմամբ ապահովելու ակնկալվող ժամկետների մասին,

- հստակեցման է ենթարկվել առեւտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում սպառված էլեկտրաէներգիայի վերահաշվարկման կարգը,

- կրճատվել են էլեկտրական ցանցին միացման ժամկետները, մասնավորապես, 0.4 կՎ լարմամբ մինչեւ 30 կՎԱ հզորությամբ միացման դեպքում՝ 25 օրով, 30 կՎԱ-ից բարձր՝ 55 օրով, 6(10) կՎ լարմամբ միացման դեպքում՝ 35 օրով, 35, 110 կՎ լարմամբ միացման եւ կառուցվող բազմաբնակարան շենքի կամ կառուցապատվող թաղամասի էլեկտրական ցանցին միացման ժամկետները՝ 40 օրով,

- «Էներգախնայողության եւ վերականգնվող էներգիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի եւ մատակարարի միջեւ փոխհոսքերի իրականացման նպատակով սահմանվել է նաեւ սպառողի պահանջով իրեն ամրակցված առեւտրային հաշվառքի սարքը դարձափոխիչային (ռեվերսային) բազմասակագնային միաֆազ հաշվիչով փոխարինման արժեքը: Փոխարինման արժեքը սպառողը վճարում է մատակարարին՝ որպես կանխավճար, որի մարումը սկսվում է առեւտրային հաշվառքի սարքի փոխարինումից մեկ տարի հետո՝ սպառված էլեկտրաէներգիայի արժեքից այն նվազեցնելու միջոցով:

Միաժամանակ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017-2018 թվականների էներգախնայողության գործողությունների ծրագրի երկրորդ փուլին հավանություն տալու մասին արձանագրային որոշման պահանջը, ելնելով էներգախնայողության նկատառումներից՝ հաշվարկային ամսվա սպառողին ներկայացվող անդորրագրում կներառվի նաեւ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի սպառողի կողմից ծախսված էլեկտրաէներգիայի քանակությունը:

2017 թվականին լրանշակվել են նաեւ բնական գազի մատակարարման եւ օգտագործման կանոնները: Մասնավորապես՝

- սահմանվել է դրույթ, համաձայն որի՝ մատակարարը, ելնելով բնական գազից

օգտվելու անվտանգության ապահովման նկատառումներից, իրավունք ունի դադարեցնել բնակիչ-բաժանորդի կամ բազմաբնակարան շենքում գտնվող կազմակերպության գազամատակարարումը, եթե բաժանորդը մեկ տարուց ավելի բնական գազ չի սպառել, եւ այդ ընթացքում վերջինիս գազասպառման համակարգի ներտնային տեխնիկական սպասարկում չի իրականացվել: Արդյունքում՝ կնվազի բնական գազի արտահոսքի հետեւանքով ինչպես տվյալ բաժանորդի, այնպես էլ հարեւանությամբ բնակվող բնակիչների կյանքին եւ գույքին հնարավոր սպառնալիքի աստիճանը,

- հստակեցվել է բաժանորդի կողմից սպառված բնական գազի վերահաշվարկման կարգը: Առեւտրային հաշվառքի սարքի խախտման ժամանակահատվածի համար վերահաշվարկված գազի քանակը հաշվարկվող բանաձեւերը ճշգրտվել են՝ ինչպես առեւտրային հաշվառքի սարքի էլեկտրոնային ճշտիչով հագեցված չլինելու, այնպես էլ էլեկտրոնային ճշտիչով հագեցած լինելու դեպքերի համար: Հաշվի առնելով եւ ամփոփելով բաժանորդների կողմից հանձնաժողով ներկայացվող դիմումները, ճշգրտվել են առեւտրային հաշվառքի սարքի խախտման ժամանակահատվածի համար վերահաշվարկված գազի քանակը հաշվարկող բանաձեւերը:

Միաժամանակ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017-2018 թվականների էներգախնայողության գործողությունների ծրագրի երկրորդ փուլին հավանություն տալու մասին արձանագրային որոշման պահանջը, ելնելով էներգախնայողության նկատառումներից՝ հաշվարկային ամսվա համար սպառողին ներկայացվող անդորրագրում կներառվի նաեւ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում սպառողի կողմից ծախսված բնական գազի քանակությունը:

2017 թվականին լրամշակվել են «Գազպրոմ Արմենիա» եւ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության ձեւերը, ինչպես նաեւ սահմանվել է նոր տեղեկատվական ձեւ: Մասնավորապես, գազամատակարարման ցանցին նոր միացումների գործընթացի վերահսկման նպատակով՝ 2017 թվականի ապրիլի 1-ից ներդրվել են նոր կառուցվող կամ վերակառուցվող գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման գործընթացի վերաբերյալ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղեկատվության ներկայացման ձեւերը: Ներկայացվող տեղեկատվության ուսումնասիրությունը հնարավորություն կտա գնահատել

ընկերության կողմից միացման գործընթացի ժամկետների համապատասխանությունը հանձնաժողովի սահմանած ժամկետներին եւ ուսումնասիրել խախտումների առաջացման պատճառները:

ԱՄՆ կարգավորող հանձնաժողովների ասոցիացիան (NARUC), ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսական աջակցությամբ նախաձեռնել է Սեւծովյան տարածաշրջանի կարգավորողների շրջանակում կիբերանվտանգության արդյունավետ կառավարման ներդրման գործընթաց, որի նպատակն է կիբերանվտանգության ընկալման ամրապնդումը, էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության ապահովման գործընթացում կարգավորող մարմնի դերի քննարկումը՝ կիբերանվտանգության ռազմավարության մշակման եւ ներդրման տեսանկյունից, կիբերանվտանգության ռազմավարության նորմատիվների մշակման գործընթացում ԱՄՆ փորձի փոխանցումը: Վերջիններիս հետ համագործակցության արդյունքում հանձնաժողովի աշխատակազմի կողմից իրականացվել է ՀՀ էներգետիկայի բնագավառում կիբերանվտանգության հնարավոր ռիսկերի ուսումնասիրություն եւ ներկայացվել են էներգահամակարգի անվտանգության բարձրացման եւ համակարգում տվյալների պաշտպանության նպատակով անհրաժեշտ միջոցառումները: 2018 թվականի ընթացքում նախատեսվում է նաեւ կարգավորվող ընկերություններում կիբերանվտանգության մակարդակի գնահատման մեթոդիկայի մշակում, ինչը հանձնաժողովին հնարավորություն կտա առավել հստակ գնահատել կարգավորվող ընկերություններում կիբերանվտանգության առկա մակարդակը եւ առավել արդյունավետ միջոցառումներ իրականացնել հետագայում այն բարելավելու ուղղությամբ:

#### **4.1.2 Ջրային ոլորտ**

2017 թվականին լրամշակվել են խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները, ըստ որի՝

- նոր միացման դեպքում նոր համակարգը (ներառում է մատակարարի ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգից մինչեւ սահմանազատման կետն ընկած հատվածը եւ հանդիսանում է մատակարարի ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգի մաս) մատակարարի կողմից կառուցելու գործող պարտադիր պահանջի փոխարեն նախատեսվել է, որ դիմող անձի հայեցողությամբ այն կարող է կառուցվել նաեւ վերջինիս կողմից,

- փոփոխության է ենթարկվել նաեւ առեւտրային հաշվառքի սարքը վերակնքելու

ժամանակահատվածը լրանալու պահից մինչև վերակնքելու օրն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր օրվա համար բաժանորդի մեղքով չվերակնքվելու դեպքում կատարվող հաշվարկը, ինչի արդյունքում բաժանորդի համար սահմանվել է ավելի նպաստավոր դրույթ՝ սահմանափակելով հաշվարկվող խմելու ջրի առավելագույն չափաքանակը,

- առելտրային հաշվառքի սարքի շրջանցման եւ արտաքին միջամտության հետեւանքով առելտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում բաժանորդին մատուցված ծառայության քանակի վերահաշվարկն իրականացվում է ներանցման խողովակի թողունակության հիման վրա հաշվարկված խմելու ջրի օրական քանակի տասնհինգապատիկի, երեսնապատիկի եւ իննսունապատիկի չափով, համապատասխանաբար՝ բազմաբնակարան շենքի, ոչ բազմաբնակարան շենքի եւ ոչ բնակիչ բաժանորդի դեպքերում: Հարկ է նշել, որ բաժանորդների համար սահմանվել է ավելի նպաստավոր իրավակարգավորում՝ վերոհիշյալ գործակիցների մեծությունները կրկնակի նվազեցվել են,

- լրամշակվել է ջրամատակարարման ընդհատումների տեւողության դրույթը, որի համաձայն այն չպետք է գերազանցի 36 ժամը, իսկ 500 մմ-ից ավելի մեծ տրամագծով մայրուղային ջրատարների պարագայում՝ 72 ժամը, այն դեպքում, երբ կանոնների նախկին խնդրանքային մատակարարը՝ տեխնիկական խնդիրների առաջացման դեպքերում, նախապես գրավոր տեղեկացնելով հանձնաժողովին՝ կարող էր ջրամատակարարման վերականգնման ժամկետը սահմանել 72 ժամ՝ անկախ ջրագծի տրամագծից:

Հանձնաժողովն իր գործառույթների տիրույթում հետեւողական քայլեր է ձեռնարկում խմելու ջրի մատակարարման ոլորտում գործող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի պայմանների մոնիթորինգի իրականացման ուղղությամբ:

Ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգին նոր միացումների գործընթացի վերահսկման նպատակով 2017 թվականի ապրիլի 1-ից ներդրվել են նոր միացման կամ միացման փոփոխության գործընթացի իրականացման վերաբերյալ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղեկատվության ներկայացման ձեւերը: Ներկայացվող տեղեկատվության ուսումնասիրությունը հնարավորություն կտա առավել հստակ գնահատել ընկերության կողմից միացման գործընթացի ժամկետների համապատասխանությունը հանձնաժողովի սահմանած ժամկետներին եւ ուսումնասիրել խախտումների առաջացման պատճառները:

## 4.2 Սպառողների դիմումների քննարկում

Հանրային ծառայություններ մատուցող ընկերությունների հետ հարաբերություններում սպառողների ունեցած խնդիրների կարգավորման կամ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում մատուցվող ծառայությունների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով 2017 թվականին կազմակերպություններից (նաեւ սպառողների շահերը պաշտպանող) եւ ֆիզիկական անձանցից ստացվել է 967 դիմում, որոնցից 368-ը՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով, 599-ը՝ բանավոր: Դիմումները քննարկվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ժամկետներում: Ներկայացված 967 դիմումներից 714-ն իրենց բնույթով եղել են բողոքներ, որոնցից 145-ը ստացել է դրական լուծում: 822 դիմումի վերաբերյալ տրվել են անհրաժեշտ տեղեկատվություն եւ պարզաբանումներ: Գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ստացված 368 դիմումներից 122-ը վերաբերել են էլեկտրական էներգիայի մատակարարմանը, 85-ը՝ բնական գազի մատակարարմանը, 155-ը՝ խմելու ջրի մատակարարմանը, 5-ը՝ հեռահաղորդակցության եւ 1-ը՝ փոստային կապի բնագավառներին: Մասնավորապես՝

- էլեկտրական էներգիայի մատակարարմանն առնչվող 122 դիմումներից 23-ը վերաբերել են վճարման հաշիվներին անհամաձայնությանը, 11-ը՝ էլեկտրամատակարարման ընդհատումներին, 22-ը՝ էլեկտրամատակարարման դադարեցմանը եւ վերականգնմանը, 29-ը՝ նոր սպառող գրանցվելու ընթացակարգին, 11-ը՝ էլեկտրաէներգիայի որակին եւ 26-ը՝ այլ բնույթի,
- բնական գազի մատակարարմանն առնչվող 85 դիմումներից 6-ը վերաբերել են վճարման հաշիվներին անհամաձայնությանը, 55-ը՝ սպառված բնական գազի վերահաշվարկներին անհամաձայնությանը, 6-ը՝ գազամատակարարման դադարեցմանը, 2-ը՝ ներտնային տեխնիկական սպասարկմանը եւ 16-ը՝ այլ բնույթի,
- խմելու ջրի մատակարարմանն առնչվող 155 դիմումներից 42-ը վերաբերել են վճարման հաշիվներին անհամաձայնությանը, 11-ը՝ ջրամատակարարման գրաֆիկների խախտմանը, 15-ը՝ մատակարարվող խմելու ջրի ճնշմանը, 18-ը՝ ջրամատակարարման ցանցերի եւ կոյուղագծերի տեխնիկական վիճակին, 33-ը՝ նոր բաժանորդ գրանցվելուն եւ 36-ը՝ այլ բնույթի,
- հեռահաղորդակցությանն առնչվող 5 դիմումներից 4-ը վերաբերել են վճարման հաշիվներին անհամաձայնությանը, 1-ը՝ այլ բնույթի:

Գրավոր կամ էլեկտրոնային եղանակով հանձնաժողով ներկայացված դիմում-

բողոքների առարկայի ծագման իրավական կամ կազմակերպական պատճառների եւ մատակարարների ներկայացրած եռամսյակային հաշվետվությունների վերլուծությունների արդյունքները հաշվի են առնվել էլեկտրական էներգիայի, բնական գազի մատակարարման եւ օգտագործման, ինչպես նաեւ խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների լրամշակման ընթացքում:

Հանձնաժողովում գործող թեժ գծով կամ հանձնաժողով այցելելով՝ քաղաքացիները եւ կազմակերպությունների ներկայացուցիչները խորհրդատվություն են ստացել մատակարար-սպառող հարաբերություններում իրենց իրավունքների եւ պարտականությունների, դրանց խախտման դեպքում՝ անհրաժեշտ քայլերի եւ գործողությունների վերաբերյալ:

Հանձնաժողով բանավոր ներկայացված 599 դիմումից 176-ը վերաբերել են էլեկտրական էներգիայի մատակարարմանը, 109-ը՝ բնական գազի մատակարարմանը, 290-ը՝ խմելու ջրի մատակարարմանը, իսկ 24-ը՝ հեռահաղորդակցության բնագավառին:

Գրավոր կամ բանավոր ներկայացված՝ ջրամատակարարման ոլորտին վերաբերող դիմումների աճը պայմանավորված է նրանով, որ 2017 թվականից ոլորտի ամբողջական կարգավորումը (այդ թվում՝ խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների հաստատումը եւ կանոններով սահմանված պահանջների նկատմամբ վերահսկողության իրականացումը) ՀՀ ջրային օրենսգրքի փոփոխությամբ պայմանավորված՝ վերապահվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:

Սպառողը հնարավորություն է ունեցել նաեւ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի «Տեղեկատվություն սպառողին» եւ «Հարց ու պատասխան» բաժիններից: Կայքում գործող՝ «Հետեւել դիմումի ընթացքին» բաժնում համապատասխան տեղեկատվություն ներբեռնելու միջոցով դիմումատուին հնարավորություն է ունեցել հետեւելու իր դիմումի քննարկման ընթացքին:

2017 թվականի արդյունքներով հանձնաժողով ներկայացված դիմումների քննարկման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվել է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

## 5. Կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի համաձայնեցում եւ գնումների մոնիթորինգ

Հանձնաժողովի գործառույթներից իր կարելությունները առանձնահատուկ է ենթադրելու համար բնագավառի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ եւ երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության եւ համաձայնեցման գործընթացը, այդ թվում՝ ընկերությունների ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ համապատասխան վերլուծական տեղեկանքների կազմումն ու հրապարակումը: Նշված աշխատանքների իրականացումը կարելու է սակագներում ներառման ենթակա ներդրումների օգտակար եւ օգտագործվող ծավալի գնահատման, այդ համատեքստում անարդյունավետ եւ ոչ հիմնավոր ներդրումների ծավալի բացահայտման եւ վերհանման առումով՝ սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի եւ բնական գազի սակագներում դրանք չներառելու սկզբունքից ելնելով: Այդ նպատակով հանձնաժողովը յուրաքանչյուր տարի քննարկում եւ համաձայնություն է տալիս էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների հաջորդ տարիների ներդրումային ծրագրերին, ինչպես նաեւ ամփոփում ընկերությունների նախորդ տարվա ներդրումային գործունեության արդյունքները եւ հրապարակում համապատասխան վերլուծական տեղեկանքներ:

2017 թվականի ընթացքում էներգետիկայի բնագավառում հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրեր են իրականացրել «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «Երեւանի Ջերմաէլեկտրակենտրոն», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» եւ «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունները:

Իրականացվող ներդրումային ծրագրերն ուղղված են մի շարք խնդիրների լուծմանն ու կարգավորմանը: Մասնավորապես, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագրի իրականացումը կհանգեցնի շահագործման եւ պահպանման ծախսերի, կորուստների, ինչպես նաեւ հոսանքազրկումների քանակի եւ տեւողության կրճատմանը, իսկ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը նպատակաուղղված է գազափոխադրման եւ գազաբաշխման համակարգերում անխափան, հուսալի եւ անվտանգ գազամատակարարման ապահովմանը, ծառայությունների մատուցմանն ու սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը, «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական

ընկերության ներդրումային ծրագիրը միտված է ընկերության բնականոն գործունեության ապահովմանը եւ ՅԷԿ-երի հետագա շահագործման համար ոչ պիտանի սարքավորումների փոխարինմանը: «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը ուղղված է Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրական էներգիայի հաշվառման ավտոմատացված համակարգում տվյալների հաղորդման ենթակառուցվածքների արդիականացմանը, իսկ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագրի իրագործումը կապահովի ՅԷԿ-երի աշխատանքի շարունակականությունը եւ անվտանգության ու հուսալիության մակարդակի բարձրացումը:

Հանձնաժողովն առանձնակի ուշադրություն է դարձնում էլեկտրական էներգիայի մատակարարման եւ բնական գազի բաշխման գործունեությունն իրականացնող ընկերությունների ներդրումային ծրագրերի կառուցվածքին՝ առաջնահերթություն տալով սպասարկման որակի ցուցանիշների առավել ցածր մակարդակ ունեցող հատվածներում ներդրումների իրականացմանը: Մասնավորապես, ներդրումային ծրագրերի համաձայնեցման գործընթացում առանձնակի ուշադրություն է դարձվում սպասարկման որակին առնչվող սպառողներից ստացված դիմում-բողոքների, ինչպես նաեւ հանձնաժողով ներկայացվող համապատասխան տեղեկատվությունում ներկայացված առավել վատ ցուցանիշներով հասցեների, որոնք ներառվում են ընկերությունների ներդրումային ծրագրերում:

2017 թվականի ընթացքում շարունակվել է էներգետիկայի բնագավառում կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրման եւ համաձայնեցման գործընթացը: Վերլուծության են ենթարկվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «Բարձրավոլտ էլեկտրացանցեր», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ», «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունների 2016 թվականի ներդրումային գործունեության արդյունքները, քննարկվել են «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ», «Հաշվարկային կենտրոն» եւ «Երեւանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից համաձայնեցման ներկայացված ներդրումային ծրագրերը եւ ընդունվել են համապատասխան որոշումներ:

Հանձնաժողովը մշտապես հետեւում է նաեւ իր կարգավորման դաշտում գործող «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային



էներգետիկ կորպորացիա», «ՔոնթուրԳլոբալ Յիդրո Կասկադ» ՓԲԸ-ների, «Տրանսգազ» ՍՊԸ-ի եւ «ՅրագՋԷԿ» ԲԲԸ-ի կողմից իրականացվող գնումների արդյունավետությանն ու թափանցիկությանը: Վերջիններիս կողմից գնումների գործընթացի թափանցիկության ապահովման նպատակով իրականացվող գնումների մասին ողջ տեղեկատվությունը հրապարակվում է ինչպես ՀՀ ֆինանսների նախարարության գնումների էլեկտրոնային տեղեկագրում, այնպես եւ ընկերությունների ինտերնետային կայքերում:

2017 թվականի ընթացքում հանձնաժողովը, համաձայն կարգավորվող անձանց գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգի, հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող անձանց կարիքներին համապատասխան ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների քանակի եւ ժամանակացույցի գնահատման նպատակով իրականացրել է նշված անձանց կողմից հրապարակվող գնումների պլանների մոնիթորինգ, որի արդյունքները հրապարակվել են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում: Նույն ժամանակահատվածում իրականացվել է նաեւ կարգավորվող անձանց գնումների առանձին գործարքների մոնիթորինգ, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից մինչեւ գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրությունների, գործարքների համար կիրառվող գնման մեթոդների ընտրության, մրցութային փաստաթղթերի եւ մատակարարների ընտրության ընթացակարգերի մոնիթորինգը: Մոնիթորինգի արդյունքները նույնպես հրապարակվում են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

## **6. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն**

Կարգավորվող ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման եւ լիցենզիայի պայմանների վերահսկման համար, ինչպես նաեւ հնարավորություն են տալիս ձեւավորել կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների համապատասխան վիճակագրական բազա:

2017 թվականի ընթացքում էներգետիկայի բնագավառի եւ ջրային համակարգի

կարգավորվող ընկերությունները, «ԱրմենՏել», «Հայփոստ», «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությունները հանձնաժողովի սահմանած ձեւերով եւ պարբերականությամբ ներկայացրել են ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել է վերջիններիս ֆինանսական վիճակի եւ գործունեության արդյունքների վերլուծություն:

Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ առավել մանրամասն եւ հասցեական տեղեկատվություն ստանալու նպատակով էլեկտրաէներգետիկական համակարգի ՅՕՄՎտ եւ ավելի տեղակայված հզորություն ունեցող արտադրող եւ ծառայություններ մատուցող ընկերությունների համար մշակվել եւ հաստատվել են հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների անհատական ձեւեր, որտեղ արտացոլված են յուրաքանչյուր ընկերության գործունեությանն առնչվող առանձնահատկությունները:

Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացմանն ուղղված միջոցառումների շրջանակում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին էլեկտրական էներգիայի վաճառքի ու բաշխման ծառայությունների մատուցման մասով համապատասխան ֆինանսատնտեսական ցուցանիշների տարանջատված հաշվառումն ապահովելու նպատակով լրամշակվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության հաշվապահական հաշվառման հաշիվների եւ ենթահաշիվների ցանկը, եւ այդ հանգամանքը հաշվի է առնվել նաեւ ընկերության համար մշակված ֆինանսական հաշվետվությունների անհատական ձեւերում:

Հաշվի առնելով, որ ջրային ոլորտում ՀՀ կառավարության կողմից հայտարարված նրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն, որը վարձակալության պայմանագրի համաձայն 2017 թվականի հունվարի 1-ից խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայություններ է մատուցում «Երեւան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» ու «Նոր Ակունք» ՓԲԸ-ների սպասարկման տարածքներում, վերջինիս համար եւս մշակվել են հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների անհատական ձեւեր, որտեղ արտացոլված են ընկերության գործունեությանը եւ վարձակալության պայմանագրին առնչվող առանձնահատկությունները:

Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողների եւ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության միջեւ իրականացվող էլեկտրական էներգիայի

փոխհոսքերի վերաբերյալ տեղեկատվության ստացման անհրաժեշտությունից ելնելով՝ մշակվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից հանձնաժողով ներկայացվող համապատասխան տեղեկատվական ձեւ:

Սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սպառողներից գումարների հավաքագրման եւ էլեկտրաէներգետիկական համակարգի արտադրող կայաններին եւ ծառայություններ մատուցող ընկերություններին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սահմանված կարգով եւ ժամկետներում վճարումների կատարման գործընթացը վերահսկելու նպատակով հանձնաժողովն ամսական արդյունքներով ստացել, վերլուծել եւ ամփոփել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հատուկ հաշիվներում դրամական միջոցների շարժի վերաբերյալ տեղեկատվությունը:

Էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման եւ ջրային համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով հանձնաժողովը կշարունակի իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:

## **7. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ**

2017 թվականի ընթացքում հանձնաժողովը, գործելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում եւ հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության գերակայությունները, աշխատանքներ է իրականացրել բնագավառում գործարար եւ ներդրումային միջավայրի բարելավման, մրցակցության խթանման, շարժական կապի ծառայությունների հասանելիության ապահովման, բաժանորդների իրավունքների եւ շահերի պաշտպանության, ինչպես նաեւ նոր տեխնոլոգիաների եւ ծառայությունների ներդրման ուղղությամբ: Մասնավորապես, կարելուով են իրականացված հետեւյալ աշխատանքները.

- ՀՀ տարածքում հանրային շարժական կապի ցանցերի զարգացման եւ ծածկույթների ընդլայնման գործընթացի շրջանակում, այդ թվում՝ հանձնաժողովի կողմից սահմանված լիցենզիոն պարտավորությունների հիման վրա, «ՎեՈՆ Արմենիա», «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական եւ «Յուքոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները շարունակել են արդիականացնել իրենց հանրային շարժական կապի

ցանցերն ու ծածկույթները: Կատարված աշխատանքների արդյունքում 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետության բնակավայրերի 100 տոկոսն ապահովված է առնվազն մեկ օպերատորի հանրային շարժական կապի ծածկույթով: Ընդ որում, բնակավայրերի 4.2 տոկոսն ապահովված է 1 օպերատորի, 15.3 տոկոսը՝ 2 օպերատորների եւ 80.2 տոկոսը՝ 3 օպերատորների հանրային շարժական կապի ծածկույթով: Հանրային շարժական կապի ծածկույթի ընդլայնման եւ տեխնոլոգիական զարգացման աշխատանքները կրելու են շարունակական բնույթ:

- Բացի այդ, «ՎեՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի նկատմամբ հանձնաժողովի որոշմամբ սահմանված պարտավորությունների համաձայն՝ ընկերությունը պետք է 3 տարվա ընթացքում հանրապետության 40 մարզային բնակավայրերում ապահովի լայնաշերտ ինտերնետ հասանելիություն՝ օպտիկամանրաթելային կապուղիների միջոցով: Այդ կապակցությամբ, 2016-2017 թվականների ընթացքում նշված բնակավայրերի ցանկից ընկերությունը օպտիկամանրաթելային կապուղիների միջոցով լայնաշերտ ինտերնետ հասանելիություն է ապահովել 28 մարզային բնակավայրերում:
- Քառանիշ կարճ կողով ծառայությունների համարների տրամադրման եւ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորների կողմից դրանց օգտագործման պայմանների կարգավորման նկատառումներից ելնելով՝ լրամշակվել են ՀՀ համարագրման պլանը եւ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված համարի եւ կողի զբաղեցման թույլտվության հատկացման եւ օգտագործման կանոնները:
- Լրամշակվել է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզավորման կարգը: Մասնավորապես, լրամշակման արդյունքում պարզեցվել է լիցենզիա ստացող անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի պահանջը, որի արդյունքում նշված անձանց հնարավորություն կընձեռվի հանձնաժողով ներկայացնել կապի ոլորտում քաղաքաշինության փաստաթղթերի մշակման լիցենզիա ունեցող անձանց կողմից մշակված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի տեխնիկական նախագիծ կամ լիցենզիա ստացող անձի կողմից մշակված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի տեխնիկական նկարագիր:

Բացի այդ, լիցենզավորման կարգում սահմանվել են հանրային էլեկտրոնային

հաղորդակցության ցանցի լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայում փոփոխությունների կատարման, լիցենզիայի գործողության կասեցման, դադարեցման ընթացակարգերը:

- ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 20-ի «Պետական մարմինների կողմից «Ինտերնետ կապի տրամադրում» ծառայության գնման գործընթացին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» № 1069-Ն որոշման պահանջներով սահմանված է, որ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են ինտերնետային կապի տրամադրման ծառայությունների գնումներ իրականացնել միայն այն մատակարար կազմակերպություններից, որոնք կմատուցեն «ծառայության «ժխտում/բաշխված ծառայությունների ժխտում» (DOS/DDOS կամ ԴՈՍ) հարձակումներից պաշտպանված ինտերնետ կապի ծառայություն:

Վերոնշյալ որոշման պահանջների կատարումն ապահովելու նպատակով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն ընդունել է «Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին տվյալների հաղորդման եւ ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցելու ընթացքում տեղեկատվական անվտանգության պահանջներն ապահովելու մասին» որոշումը: Ըստ այս իրավական ակտի՝ տվյալների հաղորդման եւ ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող անձանց նկատմամբ սահմանվում է պարտավորություն, համաձայն որի՝ նշված անձինք պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին ինտերնետ կապի ծառայություններ տրամադրելիս պետք է ապահովեն նաեւ ինտերնետ կապի պաշտպանվածությունը «ԴՈՍ» հարձակումներից: Բացի այդ, նշված դրույթի կատարման նկատմամբ վերահսկողության անհրաժեշտությունից ելնելով՝ որոշմամբ սահմանվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին մատուցվող ինտերնետ կապի ծառայությունների վերաբերյալ կանոնավոր հաշվետվության ձեւ, որի լրացված եւ ստորագրված տարբերակը տվյալների հաղորդման եւ ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող անձինք պարտավոր են կիսամյակային պարբերականությամբ ներկայացնել հանձնաժողով: Այնուհետեւ, փոխօգնության կարգով, լրացված հաշվետվությունները կտրամադրվեն ՀՀ տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը:

- Հանձնաժողովի որոշմամբ սահմանվել է, որ ամրակցված եւ շարժական

հեռախոսակապի ծառայություններ մատուցող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորը բաժանորդի գրավոր դիմելու դեպքում տրամադրում է բաժանորդի մուտքային եւ ելքային զանգերի ու կարճ հաղորդագրությունների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ, եթե այդ զանգերն ու կարճ հաղորդագրությունները սակագրվել են եւ բաժանորդների համար առաջացրել ծառայության վճար: Նշված տեղեկություններն առնվազն պարունակում են մուտքային եւ ելքային զանգերի ու կարճ հաղորդագրությունների հեռախոսահամարները, մուտքային զանգերի եւ կարճ հաղորդագրությունների ստացման, ելքային զանգերի կատարման եւ ելքային կարճ հաղորդագրությունների ուղարկման ամսաթվերը, ժամերը, րոպեները, վայրկյանները, խոսակցությունների տևողությունները, ինչպես նաեւ ծառայությունների արժեքը:

Բացի այդ, օպերատորին վերապահվում է իրավասություն բաժանորդի դիմելու դեպքում տրամադրել մուտքային եւ ելքային զանգերի ու կարճ հաղորդագրությունների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ, եթե այդ զանգերն ու կարճ հաղորդագրությունները չեն սակագրվել եւ չեն առաջացրել ծառայության վճար բաժանորդի համար՝ պայմանով, որ նշված տեղեկությունները չտրամադրելու դեպքում օպերատորը նախապես այդ մասին տեղեկատվություն է հրապարակում իր պաշտոնական ինտերնետային կայքում: Նշված տեղեկություններն առնվազն պարունակում են մուտքային եւ ելքային զանգերի ու կարճ հաղորդագրությունների հեռախոսահամարները, մուտքային զանգերի եւ կարճ հաղորդագրությունների ստացման, ելքային զանգերի կատարման եւ ելքային կարճ հաղորդագրությունների ուղարկման ամսաթվերը, ժամերը, րոպեները, վայրկյանները, խոսակցությունների տևողությունները: Ընդ որում, տեղեկությունները բաժանորդներին տրամադրվում են փաստաթղթային եւ (կամ) էլեկտրոնային տարբերակներով, իսկ տեղեկությունների տրամադրման պայմանների եւ վճարների վերաբերյալ օպերատորը տեղեկատվություն է հրապարակում իր պաշտոնական ինտերնետային կայքում:

- Մանրածախ վաճառակետերում շարժական կապի հաշիվների դիմաց բաժանորդներից հավելավճարների գանձման հարցի կարգավորման անհրաժեշտությունից ելնելով՝ ընդունվել է «Բաժանորդների կանխավճարային եւ հետվճարային հաշիվների համալրման, վերալիցքավորման քարտերի վաճառքի եւ հանրային էլեկտրոնային

հաղորդակցության ծառայությունների դիմաց վճարումների ընդունման մասին» որոշումը, ըստ որի՝ շարժական կապի օպերատորներն իրենց գործընկերների հետ կնքվող առևտրային միջնորդության վերաբերյալ պայմանագրերի շրջանակում պետք է ապահովեն, որ հաշիվների համալրման, վերալիցքավորման քարտերի վաճառքի եւ էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների դիմաց վճարումներ ընդունելու ընթացքում այդ վճարումները բաժանորդներից գանձվեն միայն հաշիվների համալրման գումարների, վերալիցքավորման քարտերի անվանական գների եւ էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների սակագներին համարժեք չափով (առանց որեւէ հավելավճարների):

- Հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական կապի ցանցերի, ինչպես նաեւ շարժական ու անրակցված կապի ցանցերի միջեւ փոխկապակցման ծառայությունների վճարների կարգավորման նկատմամբ միասնական մոտեցում կիրառելու նկատառումից ելնելով՝ ընդունվել է որոշում, ըստ որի՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական կապի ցանցերի, շարժական եւ անրակցված կապի ցանցերի միջեւ կիրառվող փոխկապակցման ծառայությունների վճարները սահմանվում են ըստ ժամանակացույցի՝ 2018 թվականի հունվարի 1-ից նվազեցնելով 1 դրամով՝ սահմանելով 8,4 դրամ (առանց ԱԱՀ), իսկ 2019 թվականից հետո եւս 1 դրամով՝ սահմանելով 7,4 դրամ (առանց ԱԱՀ):
- Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգում կատարվել են փոփոխություններ, որոնց համաձայն՝ ռադիոհաճախականությունների որոշակի տիրույթներում աշխատող ցածր հզորության նույնականացման (RFID) եւ «իրերի ինտերնետ» (IoT) տեսակի LoRa(LPWAN) տեխնոլոգիայի սարքավորումները կարող են շահագործվել առանց ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության:
- ՀՀ տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, ՀՀ-ի վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում բնակչության ազդարարումն ու իրազեկումն առավել օպերատիվ եւ արդյունավետ իրականացնելու նպատակով սահմանվել են շարժական կապի ցանցերի օպերատորների կողմից ուղարկվող կարճ հաղորդագրությունների միջոցով բնակչության ազդարարման ու իրազեկման ապահովման պահանջներն ու ընթացակարգը:

Մասնավորապես, սահմանվել է, որ արտակարգ իրավիճակների դեպքում, պատշաճ ազդարարման եւ իրազեկման ապահովման նպատակով, հանրային շարժական կապի օպերատորները պետք է ապահովեն շուրջօրյա (ներառյալ ոչ աշխատանքային օրերը) փոխգործակցություն ՅՅ արտակարգ իրավիճակների նախարարության հետ:

Միեւնույն ժամանակ, օպերատորները պետք է խմբավորեն իրենց շարժական կապի ցանցերում օգտագործվող հեռախոսահամարներն՝ ըստ ՅՅ մարզերի եւ, ՅՅ արտակարգ իրավիճակների նախարարության պահանջի դեպքում, կարճ հաղորդագրությամբ տեղեկատվություն ուղարկեն արտակարգ իրավիճակի վերաբերյալ՝ նախարարության ներկայացրած կարճ հաղորդագրության բովանդակությանն ու պայմաններին համապատասխան:

Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջեւ մրցակցությունը խթանելու եւ տեխնոլոգիական չեզոքություն պահպանելու սկզբունքների վրա հիմնված կարգավորման քաղաքականության իրականացման արդյունքում արձանագրվել են հետեւյալ զարգացումները.

- Հանրային ամրակցված հեռախոսակապը ներդրվել է հանրապետության բոլոր բնակավայրերում, թվային կայաններին միացվել է հանրային ամրակցված հեռախոսակապի բաժանորդների 93 տոկոսը: Արդյունքում՝ Երեւան քաղաքում թվայնացման մակարդակը կազմել է 100 տոկոս, իսկ մարզերում՝ 86 տոկոս:
- Հանրապետության բնակավայրերի 100 տոկոսն ապահովված է լայնաշերտ շարժական կապի 3G տեխնոլոգիայի ծածկույթով: Հարկ է նշել, որ հանրային շարժական կապի բաժանորդների թվաքանակը (այդ թվում՝ 3G/4G/4G+ եւ 2G) 2017 թվականի տարեվերջին կազմել է 3488524, որը նախորդ տարվա համեմատությամբ աճել է մոտ 1,6 տոկոսով:
- Ջարգացում են ապահովել 4G (LTE) տեխնոլոգիայի վրա հիմնված լայնաշերտ շարժական կապի ցանցերի ծառայությունները, որոնք հասանելի են դարձել Երեւան քաղաքում, Արագածոտնի մարզի Աշտարակ, Արարատի մարզի Արտաշատ, Արմավիրի մարզի Արմավիր, Վաղարշապատ, Գեղարքունիքի մարզի Մարտունի, Սեւան, Լոռու մարզի Սպիտակ, Ստեփանավան, Վանաձոր, Կոտայքի մարզի Աբովյան, Գառնի, Եղվարդ, Ծաղկաձոր, Շիրակի մարզի Արթիկ, Գյումրի, Սյունիքի մարզի Ագարակ, Գորիս, Կապան, Մեղրի, Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր, Ջերմուկ, Վայք եւ Տավուշի մարզի Բագրատաշեն, Բերդ, Դիլիջան, Իջեւան եւ Պտղավան




բնակավայրերում:

- 4G+ (LTE Advanced) տեխնոլոգիայի վրա հիմնված լայնաշերտ շարժական կապի ցանց է գործարկվել հանրապետության 726 բնակավայրերում, որոնք կազմում են բնակավայրերի ընդհանուր քանակի 72.3 տոկոսը: Մասնավորապես, 4G+ տեխնոլոգիայի վրա հիմնված լայնաշերտ շարժական կապի ծառայությունները հասանելի են դարձել Երեւան քաղաքում, Արագածոտնի մարզի՝ 94, Արարատի մարզի՝ 96, Արմավիրի մարզի՝ 89, Գեղարքունիքի մարզի՝ 55, Լոռու մարզի՝ 79, Կոտայքի մարզի՝ 56, Շիրակի մարզի՝ 97, Սյունիքի մարզի՝ 72, Վայոց ձորի մարզի՝ 32 եւ Տավուշի մարզի 55 բնակավայրերում: 2018 թվականի ընթացքում նախատեսվում է 4G+ տեխնոլոգիայի վրա հիմնված ցանցի ենթակառուցվածքների էական ընդլայնում հանրապետության այլ բնակավայրերում, որի արդյունքում միջպետական մայրուղիների, ինչպես նաեւ բնակավայրերի առնվազն 88 տոկոսն ապահովված կլինի 4G+ տեխնոլոգիայի լայնաշերտ շարժական կապի ծածկույթով:
- ՀՀ մարզերում CDMA անլար տեխնոլոգիայի հիման վրա գործող հեռախոսագծերի արդիականացման գործընթացի շրջանակում 830 բնակավայրերում 450 ՄՀց տիրույթում շահագործվող անլար լայնաշերտ տեխնոլոգիայի կիրառմամբ արդիականացվել են CDMA անլար տեխնոլոգիայի հիման վրա գործող հանրային ամրակցված հեռախոսային ցանցի հեռախոսագծերը, ինչը հնարավորություն է ընձեռում ստանալ հանրային ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություններ:
- Միաժամանակ, իրականացված լայնամասշտաբ աշխատանքների արդյունքում հանրային ամրակցված լայնաշերտ ինտերնետի հասանելիությամբ ապահովված են հանրապետության բոլոր բնակավայրերը (100%), այդ թվում՝ 989 (99.4%) բնակավայր անլար եւ 322 (32.4%) բնակավայր՝ լարային տեխնոլոգիաների կիրառմամբ, մասնավորապես՝ Wi-Fi, Wi-Max, xDSL, FTTx, Ethernet: 2018 թվականի ընթացքում ամրակցված ցանցերի ենթակառուցվածքների ներդրմանն ուղղված աշխատանքները կշարունակվեն նաեւ հանրապետության այլ բնակավայրերում:
- Տարեվերջին միջազգային «ԱՅՓԻ» տարանցման հոսքերի թողունակությունը հանրապետությունում կազմել է 379000 Մբիթ/վ:


Ստորեւ բերված է միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության հոսքերի

թողունակության 2008-2017 թվականների աճի դինամիկան.



- Մրցակցության արդյունքում միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության հոսքերի աճի շնորհիվ նվազել է այդ ծառայության սակագինը: 2017 թվականի տարեվերջին 1 Մբիթ/վ արագությամբ տարանցիկ «ԱՅՓԻ» հոսքի արժեքը կազմել է 1400 դրամ՝ 2016 թվականի տարեվերջի համեմատությամբ նվազելով շուրջ 53%-ով:


Ստորել բերված է միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության սակագների 2008-2017 թվականների նվազման դինամիկան 1 Մբիթ/վ արագությամբ տարանցիկ «ԱՅՓԻ» հոսքի համար.



- Լայնաշերտ անրակցված ինտերնետ հասանելիության ծառայությունների մանրածախ շուկայում գերակշռել են օպտիկամանրաթելային FTTx օգտվող բաժանորդները, որոնց տեսակարար կշիռը 2017 թվականին կազմել է շուրջ 51 տոկոս: Ընդ որում, 2016 թվականի համեմատ FTTx օգտվող բաժանորդների թվաքանակն աճել է շուրջ 17 տոկոսով: Միեւնույն ժամանակ, շուրջ 12 տոկոսով նվազել է լարային xDSL տեխնոլոգիայով ինտերնետ հասանելիությամբ բաժանորդների թվաքանակը:
- Մանրածախ շուկայում լայն տարածում են ստացել առավել արագագործ տեխնոլոգիաների (օրինակ՝ FTTH) վրա հիմնված ինտերնետ հասանելիության սակագնային փաթեթներ, որոնք սպառողներին առաջարկվում են ինչպես ինքնուրույն ծառայության, այնպես էլ «Երեքը մեկում (Triple Play)» ձևաչափով՝ ներառելով նաև «ԱՅՓԻ» հեռուստատեսություն և հեռախոսակապ: Մասնավորապես, շուկայում «Երեքը մեկում» ծառայությունների փաթեթով «ԱՅՓԻ» հեռուստատեսության և հեռախոսակապի հետ միասին առաջարկվում են ինտերնետ հոսքի 20Մբ/վ-ից մինչև 100Մբ/վ արագություններ՝ 8500 դրամից մինչև 24000 դրամ սակագներով: Մանրածախ շուկայում անրակցված և շարժական կապի համակցմամբ օպերատորների կողմից առաջարկվել է նորարարական «Չորսը մեկում (Quad Play)» ծառայությունների փաթեթը, որը ներառում է

ամրակցված կապի տեխնոլոգիայի հիման վրա մատուցվող հեռախոսակապը, ինտերնետ հասանելիությունը, «ԱՅՓԻ» հեռուստատեսությունը, ինչպես նաև շարժական բջջային հեռախոսակապը:


- Ինտերնետ հասանելիության ծառայությունների բաժանորդների քանակը (այդ թվում՝ շարժական 3G/4G/4G+ եւ 2G) 2017 թվականին կազմել է 2623632, որը նախորդ տարվա համեմատությամբ աճել է շուրջ 8.8 տոկոսով:
- Ավելացել են լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման ծավալները, որոնց բաժանորդների քանակը (ներառյալ՝ շարժական 3G/4G/4G+) 2017 թվականին կազմել է 2272865, ինչը նշանակում է, որ նախորդ տարվա համեմատ գրանցվել է բաժանորդների քանակի 19 տոկոս աճ: Ստորեւ բերված է լայնաշերտ ինտերնետից օգտվող բաժանորդների քանակի 2008-2017 թվականների աճի դինամիկան.



- Ավելացել են շարժական լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման ծավալները, որոնց բաժանորդների քանակը 2017 թվականին կազմել է 1957546, ինչը նշանակում է, որ նախորդ տարվա համեմատ գրանցվել է բաժանորդների քանակի աճ 22 տոկոսով:

Ստորեւ բերված է շարժական լայնաշերտ ինտերնետ հասանելիության

բաժանորդների քանակի 2012-2017 թվականների աճի դինամիկան.



**8. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության, թափանցիկության ապահովումը եւ համագործակցությունը զանգվածային լրատվության միջոցների ու հասարակական կազմակերպությունների հետ**

Հանձնաժողովը, օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում, հրավիրված դռնբաց նիստերի ընթացքում ընդունում է որոշումներ, որոնց կատարումը պարտադիր է կարգավորվող ընկերությունների համար: 2017 թվականի ընթացքում, հավատարիմ իր հրապարակային եւ թափանցիկ գործելաոճին, ինչպես նաեւ նպատակ ունենալով հանրությանը հնարավորինս ներգրավել հանրային ծառայությունների կարգավորման գործընթացում, հանձնաժողովն իր պաշտոնական ինտերնետային կայքում յուրաքանչյուր շաբաթ հրապարակել է մանրամասն տեղեկատվություն նիստերում քննարկվող հարցերի վերաբերյալ: 2017 թվականին հրավիրվել է հանձնաժողովի 80 նիստ եւ ընդունվել 586 որոշում:

Կարելի էրելով զանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցությունը՝ հանձնաժողովը սահմանված ժամկետներում պարզաբանումներ է տրամադրել նրանց կողմից բարձրացված գրավոր եւ բանավոր

հարցադրումներին: Ջանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները մասնակցել են հանձնաժողովի նիստերին եւ հանրային քննարկումներին, ինչը նպաստել է կարգավորող մարմնի գործունեության թափանցիկության, հրապարակայնության եւ սպառողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքը, որը պարբերաբար թարմացվում է, զանգվածային լրատվամիջոցներին, սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպություններին եւ ցանկացած շահագրգիռ անձի հնարավորություն է ընձեռում տեղեկանալ հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման գործընթացին, ծանոթանալ հանձնաժողովի գործունեությանը, ստանալ ծառայությունների սպասարկման որակի եւ սպառողների իրավունքների վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն:

Կարելի էրելով սպառողների հետ աշխատանքը՝ հանձնաժողովը հանրային հնչեղություն ունեցող, մասնավորապես, սակագների ձեւավորման, դրանց հաշվարկման մեթոդիկաների, կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի եւ սպառողների իրավունքների պաշտպանությանն առնչվող այլ հարցերի շուրջ, սերտորեն համագործակցել է սպառողների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ, ինչը եւս նպաստել է հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

2017 թվականի ընթացքում սպառողների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպությունները մասնակցել են հանձնաժողովի եւ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից համատեղ իրականացված մոնիթորինգի աշխատանքներին, որի նպատակն էր ստուգել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից գրանցված մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների հավաստիությունը:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջին համապատասխան, ինչպես յուրաքանչյուր տարի, 2017 թվականին եւս, հանձնաժողովն իր պաշտոնական ինտերնետային կայքում եւ տպագիր մամուլում հրապարակել է նախորդ տարվա իր գործունեության հաշվետվությունը:

Միաժամանակ, համաձայն ՀՀ կառավարության 2016 թվականի համապատասխան արձանագրային որոշմամբ հաստատված՝ Հայաստանի

Հանրապետության հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման անկախության բարձրացման նպատակով իրավական գործողությունների ծրագրի՝ հանձնաժողովն իր հաջորդ տարվա գործունեության ծրագրի նախագիծը հանրային քննարկման ներկայացնելու եւ ողջամիտ առաջարկությունները ծրագրում ներառելու նպատակով այն հրապարակել է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում եւ քննարկել հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող ընկերությունների եւ սպառողների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ:

Բացի այդ, վերը նշված ծրագրին համապատասխան՝ հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում եռամսյակային արդյունքներով հրապարակվել է նաեւ 2017 թվականի աշխատանքային ծրագրով նախատեսված եւ կատարվելիք աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

2017 թվականին հանձնաժողովի անդամները եւ աշխատակազմի մասնագետները հանրային հնչեղություն ունեցող խնդիրների եւ սպառողների իրավունքների պաշտպանության մասին պարբերաբար հանդես են եկել ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով եւ հարցազրույցներով: Կատարվել է մամուլի հրապարակումների ամենօրյա վերլուծություն: Հանձնաժողովի եւ կարգավորվող ոլորտների գործունեության մասին հրապարակումները ներկայացվել են աշխատակազմին՝ դիտարկելի դարձնելով ծառայություններ մատուցող ընկերությունների եւ հանրության կարծիքն ու գնահատականը:

#### **9. Համագործակցությունը Եվրասիական տնտեսական միության, Եվրոպական միության, օտարերկրյա պետությունների եւ միջազգային կազմակերպությունների հետ**

Հանձնաժողովը 2017 թվականի ընթացքում համագործակցել է Եվրասիական տնտեսական միության, Եվրոպական միության, օտարերկրյա պետությունների եւ միջազգային կազմակերպությունների հետ, մասնավորապես՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի, Եվրոպական համայնքի քարտուղարության, Եվրոպական հանձնաժողովի, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության, Առեւտրի համաշխարհային կազմակերպության, ԱՄՆ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների անդամների ազգային ասոցիացիայի, էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի, Հեռահաղորդակցության

միջազգային միության, Կապի տարածաշրջանային համագործակցության, ԵՄ Արեւելյան գործընկերության էլեկտրոնային հաղորդակցության կարգավորողների, Միջազգային ջրային համակարգի ասոցիացիայի եւ այլ կազմակերպությունների հետ:

Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական Միության միջեւ 2017թվականի նոյեմբերի 24-ին Բրյուսելում ստորագրված համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի տեքստը նշակվել է 6 բանակցային փուլերի արդյունքում, որի ընթացքում հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակում մասնակցել է «Ծառայությունների առելուր», «Պետական մասնակցությամբ ձեռնարկություններ», «Մրցակցություն» գլուխների, ինչպես նաեւ «Ծառայությունների առելուրի մասին» ՀՀ եւ ԵՄ համապատասխան առաջարկների քննարկումներին եւ բանակցություններին:

Հանձնաժողովը մասնակցել է Եվրոպական միության Արեւելյան գործընկերության ծրագրի շրջանակում ստեղծված էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորող մարմինների կազմակերպության աշխատանքներին: Մասնավորապես, 2017 թվականին հանձնաժողովի ներկայացուցիչները մասնակցել են նշված կազմակերպության նիստերին, ռադիոհաճախականության, ռուսմիգրի եւ համեմատական վերլուծության փորձագետների աշխատանքային խմբերի նիստերին ու սեմինարներին, որտեղ քննարկվել են էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորման առնչվող բազմաթիվ արդիական խնդիրներ:

Հանձնաժողովի ներկայացուցիչները Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ներկայացուցիչների հետ համատեղ մասնակցել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիային կից բնական մենաշնորհների, էլեկտրաէներգետիկայի, գազի, նավթի եւ նավթամթերքների, սպառողների իրավունքների պաշտպանության խորհրդատվական կոմիտեների, Եվրասիական տնտեսական միության ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձեւավորման ենթակոմիտեի եւ գազի ընդհանուր շուկայի ձեւավորման աշխատանքային խմբի նիստերին ու խորհրդակցություններին:

Հանձնաժողովը 2017 թվականին մասնակցել է Հայաստանի Հանրապետության եւ Եվրասիական զարգացման բանկի միջեւ 2015 թվականի նոյեմբերի 4-ին ստորագրված «Կայունացման եւ զարգացման Եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով նախատեսված ֆինանսական վարկի երրորդ մասնաբաժնի տրամադրման միջոցառումներին:



Հանձնաժողովն ապահովել է ՀՀ վարչապետի 2017 թվականի ապրիլի 10-ի «Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ 2016 թվականի նոյեմբերի 11-ին ստորագրված «Ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագիր. երկրորդ փուլ (ընթացիկ գործառնություններ) վարկային համաձայնագրով նախատեսված երկրորդ մասնաբաժնի ստացման համար անհրաժեշտ գործողությունների կատարման ժամանակացույցը հաստատելու մասին» №353Ա որոշմամբ նախատեսված միջոցառումների կատարումը:

2017 թվականին ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարության համակարգմամբ հանձնաժողովը մասնակցել է ՀՀ առեւտրային քաղաքականության երկրորդ վերաքննության գործընթացի իրականացման նպատակով Առեւտրի համաշխարհային կազմակերպության պատվիրակության այցի ընթացքում կազմակերպված ոլորտային հանդիպումներին եւ քննարկումներին, ինչպես նաեւ համապատասխան տեղեկատվության նախապատրաստման աշխատանքներին:

Ակնկալելով Եվրոպական Միության երկրների փորձագետներից խորհրդատվություն ստանալ՝ էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման խնդրի լավագույն լուծումներ գտնելու, շուկայի առավել արդյունավետ մոդել ընտրելու, ինչպես նաեւ այդ ոլորտում հանձնաժողովի աշխատակազմի որակավորումը բարձրացնելու առումներով, հանձնաժողովը 2017 թվականին ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարության համակարգմամբ նախաձեռնել է նախապատրաստական աշխատանքներ Եվրոպական հանձնաժողովի կողմից տեխնիկական աջակցության եւ տեղեկատվության փոխանակման TAIX գործիքի շրջանակում էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման եւ կարգավորման վերաբերյալ սեմինար կազմակերպելու համար:

Հանձնաժողովի ներկայացուցիչները շարունակաբար մասնակցել են Սեւծովյան տարածաշրջանի էներգետիկայի բնագավառի կարգավորողների համար կիրեռանվտանգության նախաձեռնության շրջանակում ԱՄՆ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների անդամների ազգային ասոցիացիայի եւ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից համատեղ կազմակերպվող սեմինարներին, որոնցից վերջինը կայացավ Երեւանում՝ 2017 թվականի դեկտեմբեր ամսին: Ընդ որում, հանձնաժողովի համար անցկացվեց առանձին ուսուցողական սեմինար՝ ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի կիրեռանվտանգության հայեցակարգի մշակմանը աջակցելու նպատակով:

Հանձնաժողովը, հանդիսանալով էներգետիկ կարգավորողների

տարածաշրջանային ասոցիացիայի (ԷԿՏԱ) հիմնադիր անդամ, ակտիվորեն մասնակցում է այդ կազմակերպության ընդհանուր ժողովների, կարգավորող հանձնաժողովների նախագահների նիստերի, լիցենզավորման եւ մրցակցության, սակագների եւ գնագոյացման կոմիտեների, ինչպես նաեւ սպառողների եւ մանրածախ շուկաների աշխատանքային խմբի հերթական նիստերին, կարգավորմանը վերաբերող տեղեկատվության փոխանակմանը:

2010 թվականին ստորագրված համագործակցության համաձայնագրի շրջանակում շարունակվում է համագործակցությունը հանձնաժողովի եւ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները եւ տնտեսական մրցակցությունը կարգավորող հանձնաժողովի միջեւ: Մասնավորապես, իրականացվել են համատեղ աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումները, իսկ 2017 թվականի դեկտեմբերին ստորագրվել է երկու հանրապետությունների կարգավորող մարմինների 2018 թվականի համատեղ աշխատանքային ծրագիրը:

#### **10. Հանձնաժողովի կողմից բյուջետային մուտքերի ապահովումը**

Հանձնաժողովի կարգավորման դաշտում գործող ընկերություններն ապահովում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի զգալի մուտքեր՝ լիցենզիաների (թույլտվությունների) տուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման եւ օգտագործման վճարների, կարգավորման պարտադիր վճարների, ինչպես նաեւ նոր արտադրական հզորությունները լիցենզիաների գործողության ժամկետում չգործարկելու կամ լիցենզիայի պայմանները ոչ պատշաճ կատարելու համար գանձվող ֆինանսական երաշխիքների գծով վճարումների հաշվին: 2017 թվականին նշված աղբյուրներից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցվել է շուրջ 8.4 մլրդ դրամ, որի հիմնական մասը՝ 7.3 մլրդ դրամը, կազմել են ռադիոհաճախականությունների օգտագործման եւ թույլտվությունների տրամադրման գծով մուտքերը: